

“Ի լրանալ հաղարամեան թուականիս մերոյ շարժեցաւ ի վերայ աշխարհիս Հայոց ազգ. Ազգաշէնց, մանրել եւ մաշել զմնացորդս Արամեանց: Աղէտք գործոց վնասու սոցա առաւել են քան զլանկթամուրայն, զորս կարծեմ թէ չիք տեսնալ ուրուք ի հողածնացս: Շրջին հանապազ զամն ողջոյն յաւեր քաղաքաց եւ ի կողոպուտընչից եւ անուամբ հարկաց ի յետին տնանկութիւն ածին զազգ մեր: Զթագաւոր իւրեանց, զոր Շահն կոչեն, առաւել քան զաստուած պաշտեն. այլ սա մեզ Փարաւոն եղեւ, եւ առաւել քան զՍենեքերիմ եւ զՆաբուգոդոնոսոր, ոչ գիւղ եթող՝ եւ ոչ քաղաք, զոր ոչ աղարտեաց. էր՝ զի հրով տոչորէր, եւ էր՝ զի քանդեալ ի հիմն հասուցանէր զշինուածս ամրոցաց եւ աւանից, եւս առաւել զեկեղեցիս եւ զվանորայս, սպան եւ զբազումս յերիցանց եւ ի կրօնաւորաց:”

Ահա այդ դրութեան մէջ էր Հայաստանը եւ Պարսկաստանի քաղաքական վիճակն այդպէս էր դասաւորուած, երբ թագաւորեց Շահաբբաս Մեծը: Այդ ժամանակ դեռ բուն Պարսկաստանում Հայ չկար: Հայերի մեծ մասը ամենահին ժամանակներից բնակւում էր Ատրպատականի աշխարհում, որի մայրաքաղաքի՝ Թավրիզի մէջ 7000 տուն Հայ կար: Հայերը այդ քաղաքում 12 անուանի եկեղեցիներ ունէին. եւ այսօրուայ հռչակաւոր Հաղրաթ Սհաբի մզկիթն ուրիշ բան չէ, եթէ ոչ Հայոց Ս. Յովհաննէս մայր եկեղեցին, որի սիւները դեռ կանգուն են, ինչպէս եւ սեղանը եւ աւաղանը, որ Պարսիկները ծածկել են: Եկեղեցիների մի քանիսի տեղերը դեռ յայտնի են, օրինակ